Դուռն, եւ նա արար ըստ բանից նոցա (1737 · 'ի 25 Փետրվարի)։

Այլազգի գռնապանք Ս · Յարութեան ոչ չատացեալ սահմանեալ տրօք իւրեանց, պահանջէին 'ի Լատինաց յիւրաքանչիւր ամիս 30 դահեկան, և զայլ գումարս տարեկան զգեստուց եւ ջուխայի · և 'ի բացասել Լատինաց, ոչ բանային զդուռն տաճարին, որով լինէր նոցա վիշտ եւ նեղութիւն, և արհամարհումն ուխտաւորաց նոցին · և 'ի խստանալ այլազգեաց, ազգ արարին դեսպանին Գաղղիոյ 'ի Կոստանդինուպօլիս · և նա եհան հրովարտակ ըստ դաշնագրութեան իւրեանց, չնեղել զԼատին կղերս, և չպահանջել 'ի նոցանէ աւելի ինչ քան զսահմանեալն, և 'ի ժամանակին անտրտունջ բանալ զդուռն, ՌՆԹ։ Ընթերցաւ նաեւ հրովարտակն այն, յորում խստիւ պատուիրէր Արքայ կուսակալին Դամասկոսի և դատաւորին Երուսաղէմի, սաստել զՀայս և զՅոյնս դադարել 'ի խռովութենէ եւ 'ի կռուոյ, եւ անհնազանդից սահմանեալ պատիժն է բանտ և բերդարգել · և չտալ թուղթս դատաւորաց՝ մեծամեծացն այլազգեաց եւ այլոց, եւ նոյն իսկ կուսակալին ոչ Յունաց և ոչ Հայոց, ՌՆԹ (1737)։

Իսկ Գաբրիէլ վարդապետ Աթոռակալ՝ կամեցեալ զերծուցանել զվանս Ս · Փրկչի 'ի վերահաս վտանգէ, եւ չարել զմանր քարինս առանց չաղախի շուրջանակի 'ի վերայ պարսպին 'ի զգուշութիւն գողոց և աւազակաց · զի սովորութիւն լեալ էր նոցա գալ 'ի գիշերի և ձգել պարանս 'ի պարիսպ անդր և ելանել 'ի վեր։ Եւ երաց պատուհան 'ի վերուստ 'ի վերայ արտաքին դրան, 'ի դիտել անտի դռնապանին զեկեալսն եւ զբաղխողս դրան · զի բաղում անգամ այլազգիք խարէյութեամբ տային բանալ զդուռն, և մտեալ 'ի ներքս գործէին զչարիս և զվնասս։ Մեծացոյց և զպատուհանն 'ի վերայ դրան եկեղեցւոյ · արար և նորոգութիւնս ինչ 'ի վանս Բեթղեհէմի (1738)։

Մինչդեռ զբաղեալ էր Գաբրիէլ վարդապետ 'ի նորոգել զաւերեալ տեղիս, յարեան Լատինք և կամէին յափշտակել զսեղանն Հայոց կից յարեւմտեան յորմն գերեզմանի Ս · Աստուածածնի, 'ի ձորն Գեթսէմանի, և հակառակեալ պնդէին իսկ թէ սեփականութիւն սեղանին այ-